ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-19/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով վառելիքի /բենզին ռեգուլյար/ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 07.02.2019թ. ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Հ. Սարոյանը

Անդամներ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Վ. Ավետիսյանը

Ա. Գաբրիելյանը

Հանձնաժողովի քարտուղար՝

Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության /ՀՀՌՑ/ կարիքների համար Վառելիքի ձեռքբերման նպատակով ս.թ. հունվարի 29-ին էլեկտրոնային www.eaution-armeps.am համակարգով /Համակարգ/ հայտարարվել է ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-19/7 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ /Ընթացակարգ/: Հայտերի ընդունման վերջնաժամկետ /նախաաճուրդային փուլը/ 05.02.2019թ., աճուրդը կայացել է 07.02.2019թ. ժամը 15.00-ին:

1. **Հայտերը ներկայացրած մասնակիցների տվյալները**

N	Մասնակցի անվանումը	էլ. փոստի հասցեն, հեռախոս, այլ տվյալներ	ՀՎՀՀ
1	Մաքս Օիլ ՍՊԸ	maxoil.llc@mail.ru	02662703
2	Ֆլեշ ՍՊԸ	flesh@fleshltd.am	01808789

2. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

2.1 Մաքս Օիլ և Ֆլեշ ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերում առկա են«ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-19/7 ծածկագրով հրավերով (հրավեր) պահանջվող փաստաթղթերը /էլեկտրոնային աճուրդին մասնակցելու Դիմում-Հայտարարություն/ և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3. Հանձնաժողովը արձանագրեց

3.1 էլեկտրոնային www.eauction.armeps.am համակարգով Ֆլեշ ՍՊ ընկերության կողմից ներկայացված գնառաջարկը մերժվել է համակարգի կողմից նախահաշվային գնի գերազանցմամբ:

4.Մասնակիցների առաջարկած գները, նախահաշվային գին

Չ/հ	Տեղ	Ընկերություն	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցության իրավունք
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	«ՄԱՔՍ ՕԻԼ ՍՊԸ»	16800000	13965000	20 %	16758000	13965000	20 %	16758000.00	-
1	2	ՖԼԵԾ ՍՊԸ	16800000	14175000	20 %	17010000	14175000	20 %	17010000.00	Մերժված

5.Հանձնաժողովը որոշեց՝

5.1 Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-19/7 ծածկագրով գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված հայտը 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Մաքս Օիլ ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5.2 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) ներկայացնել հարցում՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ /կցվում է/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5.3 Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև Համակարգով սահմանված ժամկետը ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված փաստաթղթերը, /առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը՝ ամբողջական նկարագիրը՝ ապրանքային նշան, արտադրող, ծագման երկիր/, ինչպես նաև Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթը, նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5.4 Գնահատման նիստը հրավիրել Համակարգով սահմանված ժամկետում՝ որակավորման փուլի ավարտից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Հ. Սարոյան

անդամներ՝ _____ Վ. Ավետիսյան

_____ Ա. Գաբրիելյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան